

Հատուկ կարծիք

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի կողմից թիվ ԼԴ/3598/02/18 քաղաքացիական գործով 30.05.2023 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

30.05.2023 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ նաև վճռաբեկ դատարան), 2023 թվականի մայիսի 30-ին գրավոր ընթացակարգով քննելով «Արգինա» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Տիգրան Սահակյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.04.2022 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Արգինա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) սնանկության գործով կառավարիչ Տիգրան Սահակյանի (այսուհետ՝ Կառավարիչ) ընդդեմ Ընկերության տնօրեն Ռուբիկ Աշուղյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, վճռաբեկ դատարանի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.04.2022 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել, «Արգինա» ՍՊԸ-ի տնօրեն Ռուբիկ Աշուղյանից «Արգինա» ՍՊԸ-ի սնանկության հատուկ հաշվին բռնագանձել 10.472.775 ՀՀ դրամ:

Համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում եմ հատուկ կարծիքս այդ մասերի վերաբերյալ:

1. վճռաբեկ դատարանը որպես գործի դատավարական նախապատմություն նշել է հետևյալը.

«Դիմելով դատարան՝ Կառավարիչը պահանջել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) և «Հանրախանութ» Դիմաց» ՍՊԸ-ի նկատմամբ Ընկերության ստանձնած պարտավորությունները համապարտության կարգով կատարելու հիմքով Ռուբիկ Աշուղյանից բռնագանձել 10.472.775 ՀՀ դրամ:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ա. Մկոյան) (այսուհետ՝ Դատարան) 09.12.2021 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 08.04.2022 թվականի որոշմամբ Կառավարչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 09.12.2021 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ: Դատավոր՝ Լ. Գրիգորյանը հայտնել է հատուկ կարծիք:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կառավարիչը:

վճռաբեկ բողոքի վերաբերյալ «առարկություն» է ներկայացրել Ընկերության տնօրեն Ռուբիկ Աշուղյանը (ներկայացուցիչ Լիլիթ Սարգսյան): Թեև այդ դատավարական փաստաթուղթը վերնագրվել է «առարկություն», սակայն այն համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածով սահմանված «վճռաբեկ բողոքի պատասխան» դատավարական փաստաթղթի պահանջներին, ուստի վճռաբեկ դատարանն այն համարում է վճռաբեկ բողոքի պատասխան»:

2. Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքի հիմք, հիմնավորումներ և պահանջ նշել է հետևյալը.

«Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 59-րդ, 66-րդ հոդվածները, ինչը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ պատասխանողը որպես Ընկերության տնօրեն 20.01.2014 թվականին կնքել է Ընկերությանը պատկանող Վանաձոր քաղաքի Ոսանողական փողոցի 1-1 և 1-2 հասցեների անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրեր, ստացել դրանցով սահմանված ընդամուր 9.500.000 ՀՀ դրամ գումարը և այն չի մուտքագրել Ընկերության դրամարկղ կամ հաշվեհամարին, այդ գումարներով չի մարել իրեն հաստատապես հայտնի՝ թիվ ԼԴ/0045/02/13 քաղաքացիական գործով 25.07.2013 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով սահմանված Ընկերության պարտավորությունները, որոնց չկատարման հիմքով էլ Ընկերությունը 08.09.2016 թվականին ճանաչվել է սնանկ: Գործի քննության ընթացքում պատասխանողը վերոգրյալ փաստերի դեմ չի առարկել և չի ներկայացրել հակառակը հիմնավորող ապացույցներ:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը գործում առկա «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի կիրառման համար անհրաժեշտ բոլոր նախապայմանների առկայության մասին վկայող ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում չի կատարել, այդ ապացույցները պատշաճ չի գնահատել վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, իսկ բոլոր ապացույցներն իրենց համակցության մեջ՝ հայցվորի վկայակոչած փաստերի հաստատման համար բավարարության տեսանկյունից, ինչի արդյունքում բողոքը մերժել է, մինչդեռ գործում առկա վերաբերելի, թույլատրելի և արժանահավատ ապացույցներով հիմնավորվել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի կիրառման համար անհրաժեշտ բոլոր նախապայմանների միաժամանակյա առկայությունը, ինչը բավարար էր վերաքննիչ բողոքը բավարարելու համար:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.04.2022 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

2.1. Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումներ նշել է հետևյալը.

«Վերաքննիչ դատարանն իրականացրել է գործում առկա ապացույցների ուսումնասիրություն, իրավական նորմերի վերլուծություն՝ դրանք համադրելով գործում առկա փաստական հանգամանքների հետ և կայացրել է օրենքի պահանջներին համապատասխան օրինական դատական ակտ: Արձանագրելով, որ ներկայացված ապացույցները հնարավորություն չեն տալիս հաստատված համարել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված վավերապայմանների առկայությունը, որը հանդիսացել է սույն գործով դատարան ներկայացված հայցի իրավական հիմքը, իսկ ներկայացված ապացույցները բավարար չեն եղել պատասխանողի մեղավորությունը հաստատված համարելու համար»:

3. Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր նշել է հետևյալը.

«Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԴ4/0034/04/16 գործով կողմից 08.09.2016 թվականի վճռի համաձայն՝ Ընկերությունը ճանաչվել է սնանկ, Տիգրան Սահակյանը նշանակվել է սնանկության գործով հիմնական կառավարիչ (**հատոր 1-ին գ.թ 10-13, 36**):

2) Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 25.11.2016 թվականի որոշմամբ հաստատվել է պահանջների վերջնական ցուցակը, որով հանձնարարվել է Կառավարչին «Հանրախսանութ «Դիմաց» ՍՊԸ-ի 7.235.400 ՀՀ դրամի պահանջը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 85-րդ հոդվածով սահմանված կարգով գրանցել պարտատերերի պահանջների գրանցամատյանում՝ որպես ստորադաս չապահովված պահանջ (**հատոր 1-ին գ.թ 40-42**):

3) Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԼԴ4/0034/04/16 սնանկության գործով 16.12.2016 թվականի որոշման համաձայն՝ սկսվել է Ընկերության լուծարման վարույթը (**հատոր 1-ին գ.թ 22-23**):

4) Ռուբիկ Աշուղյանի կողմից 20.01.2016 թվականին տրված բացատրության համաձայն՝ Ընկերությունն իրեն պատկանող գույք և դրամական միջոցներ չունի (**հատոր 1-ին գ.թ 29**):

5) Ռուբիկ Աշուղյանի կողմից 24.11.2016 թվականին տրված հայտարարության համաձայն՝ Ընկերության միակ մասնակիցը ինքն է, Ընկերությունը երբեք որևէ գործունեություն չի ծավալել, հաշվապահական բոլոր փաստաթղթերը և կնիքը կորցրել է, Ընկերությունը որևէ գույք չունի (**հատոր 1-ին գ.թ 30**):

6) Սամվել Չոբանյանի և Ընկերության տնօրեն Ռուբիկ Աշուղյանի միջև 20.01.2014 թվականին կնքված անշարժ գույքի վաճառքի պայմանագրի համաձայն՝ «Արգինա» ՍՊԸ-ի Վանաձոր քաղաքի Ուսանողական փողոց 1-1 հասցեի անշարժ գույքը Ռուբիկ Աշուղյանը 4.500.000 դրամով վաճառել է Սամվել Չոբանյանին (**հատոր 1-ին գ.թ 15**):

7) Սամվել Չոբանյանի և Ընկերության տնօրեն Ռուբիկ Աշուղյանի միջև 20.01.2014 թվականին կնքված անշարժ գույքի վաճառքի պայմանագրի համաձայն՝ «Արգինա» ՍՊԸ-ի Վանաձոր քաղաքի Ուսանողական փողոց 1-2 հասցեի անշարժ գույքը Ռուբիկ Աշուղյանը 5.000.000 դրամով վաճառել է Սամվել Չոբանյանին (**հատոր 1-ին, գ.թ. 17**)»:

4. Վճռաբեկ դատարանը որպես պատճառաբանություններ և եզրահանգումներ նշել է հետևյալը.

«Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 59-րդ, 66-րդ հոդվածների այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ապացույցների թույլատրելիությանը, վերաբերելիությանը և բավարարությանը, ինչպես նաև գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման հիման վրա ներքին համոզմամբ գնահատելու հարցին՝ վերահաստատելով նախկինում արդարադատության իրավական դիրքորոշումները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նույն հոդված 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, իսկ բոլոր ապացույցներն իրենց համակցության մեջ՝ փաստի հաստատման համար բավարարության տեսանկյունից:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ապացույցների գնահատման հարցին, նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը: Ապացույցի գնահատումն ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակումն է՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ընդ որում, ապացույցների բավարարությունը գործով ձեռք բերված ապացույցների այնպիսի համակցությունն է, որը հնարավորություն է տալիս վերջնական եզրահանգում կատարելու որոշվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ: Ապացույցների գնահատումը բավարարության տեսանկյունից հետապնդում է ապացույցների միջև հակասությունները վերացնելու նպատակ այնպես, որ փարատվեն ստացված ամբողջ ապացուցողական զանգվածից կատարված հետևությունների ճշմարտացիության վերաբերյալ կասկածները: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ապացույցների անբավարար լինելու դեպքում գործի հանգամանքների վերաբերյալ դատարանը կարող է կատարել ոչ թե որոշակի, այլ հավանական եզրակացություններ, մինչդեռ դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտը չի կարող հիմնված լինել հավանական եզրակացությունների և դատողությունների վրա **(տե՛ս, «Շենքերի կառավարում» համադիրությունն ընդդեմ Մասիս Ղազանյանի թիվ ԵԱՔԴ/0483/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):**

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներից մեկում փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը **(տե՛ս Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱՔԴ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը):**

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար **(տե՛ս, Սվետլանա Ժուլիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):**

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց հետազոտում է նախ՝ գործին դրա վերաբերելիության, օրենքով նման ապացույցի թույլատրելիության, արժանահավատության, իսկ վերաբերելի բոլոր ապացույցները միասին՝ որոշակի փաստ (փաստեր) հաստատելու համար բավարարության տեսանկյունից և անդրադառնալով ապացույցների արժանահավատության հարցին՝ արձանագրել է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույցի վերաբերելիությունը և թույլատրելիությունը ստուգելուց հետո պարտավոր է ստուգել նաև տվյալ ապացույցի արժանահավատությունը, և ապացույցների միջև հակասության դեպքում մերժել իր կարծիքով ոչ արժանահավատ ապացույցը՝ հիմնավորելով տվյալ մերժումը, իսկ փաստը հաստատել արժանահավատ ապացույցի հիման վրա **(տե՛ս թիվ 3-81(ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը):**

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ նշել է, որ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է յուրաքանչյուր ապացույց հետազոտել նախ՝ գործին դրա վերաբերելիության, օրենքով նման ապացույցի թույլատրելիության, արժանահավատության տեսանկյունից, ապա գնահատել գործում եղած բոլոր ապացույցների համակցությամբ, ինչի արդյունքում միայն հնարավոր կլինի պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը **(տե՛ս Աշոպ Ղազարյանն և Մարգարիտ Դալլաքյանն ընդդեմ «Վանաձոր» նոտարական տարածքի նոտար Արուսյակ Ազարյանի, Մարինե Յուրիկի Պարանյանի, Երրորդ անձ՝ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի թիվ ԼԴ/0898/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):**

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ դատարանը գործն ըստ էության լուծող պատճառաբանված դատական ակտ կայացնելու նպատակով պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատի գործում եղած բոլոր ապացույցները՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Դատարանի կողմից ապացույցների գնահատման արդյունքներն արտացոլվում են դատական ակտի պատճառաբանական մասում, որտեղ դատարանը պետք է մատնացույց անի այն ապացույցները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքվում է այս կամ այն ապացույցը: Դատական ակտը կարող է համարվել պատշաճ կերպով պատճառաբանված միայն այն դեպքում, երբ դրա պատճառաբանական մասում դատարանը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման օբյեկտիվ հիմքերը **(տե՛ս Արման Վարդազարյանի ընդդեմ Կարինե Վարդազարյանի թիվ ԵԱԲԴ/0598/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.04.2019 թվականի որոշումը):**

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ եթե պարտապանը սնանկ է ճանաչվել պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայտահավաք) կապիտալին տիրապետող կամ նրան կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող այլ անձանց, այդ թվում՝ պարտապանի ղեկավարի մեղքով (ուղղակի կամ անուղղակի գործողություններով պարտապանի գործունեությունն ուղղորդելը և այլն (կանխամտածված սնանկություն), ապա պարտապան իրավաբանական անձի հիմնադիրները (մասնակիցները) կամ այդ անձինք կրում են համապարտ պատասխանատվություն պարտապանի պարտավորություններով՝ վերջինիս գույքի անբավարարության դեպքում:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ կանխամտածված սնանկության դեպքում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում նշված սուբյեկտները, այդ թվում՝ պարտապան իրավաբանական անձի ղեկավարը կարող են պարտապանի

պարտավորություններով համապարտ պատասխանատվություն կրել միայն այն դեպքում, երբ պարտապանի գույքն անբավարար է պարտավորությունները կատարելու համար, ինչը, բնականաբար, կարող է բացահայտվել միայն սնանկության վարույթում սնանկության գործով կառավարչի՝ օրենքով նախատեսված գործողությունների իրականացման արդյունքում: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ կանխամտածված սնանկության դեպքում պահանջատերերի պահանջների բավարարման և օրինական շահերի պաշտպանության հետ կապված սուբյեկտիվ իրավունքների իրացումն օրենսդիրը նախատեսել է միայն սնանկության վարույթի շրջանակներում, քանի որ միայն սնանկության վարույթի շրջանակներում հնարավոր կլինի պարտապանի գույքի անբավարարության դեպքում բոլոր պահանջատերերին համամասնորեն բավարարում տալը:

Հենց այդ նպատակին է ուղղված կանխամտածված սնանկության գործերով սնանկ ճանաչված պարտապանի գույքի անբավարարության դեպքում օրենքով նախատեսված որոշակի անձանց համար համապարտ պատասխանատվության նախատեսումը: Ընդ որում, օրենսդիրը սահմանել է նաև այդ անձանց համապարտ պատասխանատվության ծագման հիմքը, այն է՝ նրանց քաղաքացիաիրավական մեղքով պարտապանի գործունեությունն ուղղորդելը կամ այլ գործողություններ կատարելը, այդ թվում՝ կանխամտածված սնանկության հատկանիշներ ստեղծելը: Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված սուբյեկտները պարտապանի նկատմամբ պահանջի առկայության դեպքում ինքնին չեն դառնում պարտապան, հետևաբար նաև՝ պարտավորության կողմ՝ սնանկության վարույթում գրանցված պահանջներով, այլ վերջիններիս՝ պարտապանի պարտավորությունների համար համապարտ պատասխանատվությունը ծագում է միայն այն դեպքում, երբ սնանկության վարույթում արձանագրվում է պարտավորությունը կատարելու համար պարտապանի գույքի անբավարարությունը:

Վերը նշված եզրահանգումների արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ թեև օրենսդիրը հստակ չի սահմանել, թե ով կարող է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված դեպքում ներկայացնել համապարտ պատասխանատվության պահանջը, այնուամենայնիվ, այդպիսի պահանջ սնանկության գործի շրջանակներում կարող է ներկայացնել միայն սնանկության գործով կառավարիչը: Այսպես, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված սուբյեկտների համապարտ պատասխանատվությունն օրենսդիրը կապել է բացառապես սնանկության գործով կառավարչի կողմից սնանկության վարույթի ընթացակարգերով սահմանված կարգով կատարված պարտապանի գույքի անբավարարության փաստի արձանագրման հետ, որից հետո պահանջատերերից յուրաքանչյուրի կողմից քաղաքացիական հայցի հարուցումը, հաշվի առնելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները, անվիճելիորեն կվատթարացնի մյուս պահանջատերերի վիճակը և անհավասար պայմաններ կստեղծի նրանց համար, իսկ բոլոր պահանջատերերի կողմից նման հայցի հարուցումը կխաթարի սնանկության վարույթի իրականացումը՝ անհնարին դարձնելով օրենքով սնանկության գործով կառավարչի վրա դրված պահանջատերերի պահանջների համաչափ բավարարման առաքելությունը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված դեպքում նույն հոդվածով նշված սուբյեկտների նկատմամբ համապարտ պատասխանատվության հիմքով գումարի բռնագանձման պահանջ կարող է ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում և միայն սնանկության գործով կառավարչի կողմից: Այլ է հարցը, որ նման պահանջի ներկայացման նախաձեռնողը կարող են լինել ինչպես կառավարիչը, այնպես էլ պահանջատերերը (պարտատերերի խորհուրդը, որը ներկայացնում է պարտատերերի

շահերը և նույն օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում կառավարչի գործունեության նկատմամբ):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նմանատիպ գործերով դատարանները պետք է առանձնակի ուշադրություն դարձնեն ապացուցման առարկայի ճիշտ որոշմանը: Մասնավորապես, դատարանները նախ և առաջ պետք է որոշեն այն իրավաբանական փաստերի շրջանակը, որոնք էական նշանակություն ունեն քաղաքացիական գործի լուծման համար և ենթակա են պարզման գործի քննության ընթացքում: Իրավաբանական նշանակություն ունեցող հենց այդ փաստերի համակցությունն էլ կկազմի ապացուցման առարկան: Ապացուցման առարկան որոշելուց հետո միայն դատարանները, գնահատելով գործով ձեռք բերված ապացույցները, որոշում են ապացուցման առարկան կազմող իրավաբանական փաստերի հաստատվելը կամ ժխտվելը և դրանից հետո միայն որոշում հայցը բավարարելու կամ մերժելու հարցը: Վնասի հատուցման գործերով փաստերի իրավաբանական նշանակություն ունենալու հարցը լուծելիս դատարանները պետք է ղեկավարվեն տվյալ իրավահարաբերությունը կարգավորող նյութական, ինչպես նաև դատավարական իրավունքի նորմերով, որոնցում նշված են տվյալ իրավահարաբերությունը և կողմերի իրավունքներն ու պարտականությունները պայմանավորող իրավաբանական փաստերը (*տե՛ս, ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Արսյոմ Գևորգյանի թիվ ՇԴ/0743/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԴ4/0034/04/16 գործով կողմից 08.09.2016 թվականի վճռի համաձայն՝ Ընկերությունը ճանաչվել է սնանկ, Տիգրան Սահակյանը նշանակվել է սնանկության գործով հիմնական կառավարիչ:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 25.11.2016 թվականի որոշմամբ հաստատվել է պահանջների վերջնական ցուցակը, որով հանձնարարվել է Կառավարչին «Հանրախսանութ «Դիմաց» ՍՊԸ-ի 7.235.400 ՀՀ դրամի պահանջը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 85-րդ հոդվածով սահմանված կարգով գրանցել պարտատերերի պահանջների գրանցամատյանում՝ որպես ստորադաս չապահովված պահանջ:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԼԴ4/0034/04/16 սնանկության գործով 16.12.2016 թվականի որոշման համաձայն՝ սկսվել է Ընկերության լուծարման վարույթը:

Ռուբիկ Աշուղյանի կողմից 20.01.2016 թվականին տրված բացատրության համաձայն՝ Ընկերությունն իրեն պատկանող գույք և դրամական միջոցներ չունի:

Ռուբիկ Աշուղյանի կողմից 24.11.2016 թվականին տրված հայտարարության համաձայն՝ Ընկերության միակ մասնակիցը ինքն է, Ընկերությունը երբեք որևէ գործունեություն չի ծավալել, հաշվապահական բոլոր փաստաթղթերը և կնիքը կորցրել է, Ընկերությունը որևէ գույք չունի:

Սամվել Չոբանյանի և Ընկերության տնօրեն Ռուբիկ Աշուղյանի միջև 20.01.2014 թվականին կնքված անշարժ գույքի վաճառքի պայմանագրի համաձայն՝ «Արգինա» ՍՊԸ-ի Վանաձոր քաղաքի Ոսանողական փողոց 1-1 հասցեի անշարժ գույքը Ռուբիկ Աշուղյանը 4.500.000 դրամով վաճառել է Սամվել Չոբանյանին:

Սամվել Չոբանյանի և Ընկերության տնօրեն Ռուբիկ Աշուղյանի միջև 20.01.2014 թվականին կնքված անշարժ գույքի վաճառքի պայմանագրի համաձայն՝ «Արգինա» ՍՊԸ-ի

Վանաձոր քաղաքի Ուսանողական փողոց 1-2 հասցեի անշարժ գույքը Ռուբիկ Աշուրյանը 5.000.000 դրամով վաճառել է Սամվել Չոբանյանին:

Դատարանը, մերժելով Կառավարչի հայցն արձանագրել է, որ հայցվորը պետք է ներկայացնի բավարար, թույլատրելի և վերաբերելի ապացույցներ Ընկերության սնանկ ճանաչվելու և դրանում Ընկերության ղեկավարի գործողությունների միջև պատճառահետևանքային կապի առկայության, այդ գործողությունները կանխամտածված սնանկության հատկանիշներ ստեղծելու դիտավորությամբ գիտակցված կատարված լինելու վերաբերյալ, ընդ որում, այդպիսի ապացույցներ կարող են լինել սնանկության կառավարչի կողմից սնանկության վարույթի շրջանակներում կազմած պարտապանի ֆինանսական վերլուծությունը և դրա արդյունքում իրականացված կառավարչի գործողությունները և ստացված արդյունքները: «Կանխամտածված սնանկության» հատկանիշների հայտնաբերումը պարտավորեցնում է սնանկության կառավարչին անհապաղ հաղորդում ներկայացնելու քրեական հետապնդման մարմիններին: Ստացվում է, որ ֆինանսական վերլուծության արդյունքում սնանկության կառավարիչը կաշկանդված է ինքնուրույն գնահատելու «Կանխամտածված սնանկության» որակումը. այն քրեաիրավական, թե՛ քաղաքացիաիրավական բնույթի է: Սնանկության կառավարչի կողմից այս պարտականության չկատարումն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի իմաստով գումարի բռնագանձման հայցը մերժելու համար, սակայն սույն գործի նյութերով սնանկության կառավարիչը չի ներկայացրել ինչպես պարտապանի ֆինանսական վերլուծության արդյունքները, այնպես էլ դրա հիմքում ընկած փաստերը, իսկ դատարան ներկայացված ապացույցները բավարար չեն իրականացնելու վերլուծություն և հանգելու այն եզրահանգման, որ Ընկերության ղեկավարի գործողությունները ուղղված են եղել ընկերությանը կանխամտածված սնանկության հասցնելուն, և որ դրանք կատարվել են մեղավորությամբ: Մասնավորապես՝ հայցադիմումում հայցվորը պնդել է, որ Ընկերության ղեկավարը հայտնել է, թե Ընկերությունը չի ունեցել դրամարկղային գրքույկ: Նման պայմաններում սնանկության կառավարիչը պետք է ներկայացնի ապացույցներ և վերլուծություն այն մասին, թե օտարված գույքի գումարներն ինչ հանգամանքներում են անհետացել, մասնավորապես՝ դրանք յուրացվել են, պահվել են կառավարչի մոտ, թե, օրինակ ուղղվել են այլ պարտավորությունների կատարմանը: Կառավարչի կողմից դատարան ներկայացված փաստաթղթերից որևէ կերպ հնարավոր չէ պարզել գույքի օտարումից զոյացած միջոցների տնօրինման կարգը և առկա չեն կառավարչի կողմից դատարան ներկայացված տեղեկություններ, վերլուծություն՝ այդ փաստը բացահայտելու համար, ընդ որում դրա բացահայտումը սույն գործով ունի առանցքային նշանակություն:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Կառավարչի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռն անփոփոխ թողնելով, պատճառաբանել է, որ սույն գործի նյութերով Կառավարիչը չի ներկայացրել ինչպես պարտապանի ֆինանսական վերլուծության արդյունքները, այնպես էլ դրա հիմքում ընկած փաստերը, իսկ ներկայացված ապացույցները բավարար չեն եղել իրականացնելու վերլուծություն և հանգելու այն հետևության, որ Ընկերության ղեկավարի գործողություններն ուղղված են եղել Ընկերությանը կանխամտածված սնանկության հասցնելուն, և որ դրանք կատարվել են մեղավորությամբ: «Սնանկության մասին» ՀՀ օրենքի իմաստով կանխամտածված սնանկության հատկանիշների առկայությունը պետք է հաստատվի բավարար չափով ապացույցների համակցված գնահատմամբ, որպիսի փաստակազմը, սակայն, սույն գործով բացակայել է:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի արտահայտած դիրքորոշումներին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են և չեն բխում սույն գործի փաստերից հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործով Դատարան ներկայացված հայցադիմումով Կառավարիչը հայտնել է, որ պատասխանողն Ընկերության տնօրենն է և միակ մասնակիցը: Ընկերությունն ունեցել է բավարար ակտիվներ կատարելու թե «Հանրախանութ «Դիմաց» ՍՊԸ-ի նկատմամբ և թե Կոմիտեի հանդեպ ունեցած պարտավորությունները, սակայն դրանք չի կատարել, օտարել է Ընկերության ակտիվները և գումարը դրամարկղ կամ հաշվեհամարին չի մուտքագրել, ուստի պատասխանողի գործողությունները պարունակում են կանխամտածված սնանկության հատկանիշներ, ինչի հիման վրա Կառավարիչը պահանջել է Կոմիտեի և «Հանրախանութ «Դիմաց» ՍՊԸ-ի նկատմամբ Ընկերության ստանձնած պարտավորությունները համապարտության կարգով կատարելու հիմքով Ընկերության տնօրենից բռնագանձել 10.472.775 ՀՀ դրամ:

Սույն գործով Կառավարչի կողմից Դատարան ներկայացված ապացույցներով հաստատվել են վերոհիշյալ իրավանորմի կիրառման համար էական նշանակություն ունեցող հետևյալ հանգամանքները.

Պատասխանողը հանդիսանում է Ընկերության միակ մասնակիցը և տնօրենը: Սամվել Չոբանյանի և Ընկերության միջև 20.01.2014 թվականին կնքված Ընկերությանը պատկանող անշարժ գույքի վաճառքի պայմանագրերի համաձայն՝ Վանաձոր քաղաքի Ուսանողական փողոցի 1-1 և 1-2 հասցեների անշարժ գույքերը պատասխանողը համապատասխանաբար 4.500.000 դրամ և 5.000.000 դրամով վաճառել է Սամվել Չոբանյանին: Վերոնշյալ գույքերի օտարման պահին Ընկերության պարտավորության չափն ընդհանուր առմամբ կազմել է 5.934.534 դրամ: Առկա չեն նշված գումարներն Ընկերության դրամարկղ կամ հաշվեհամարին մուտքագրելու և ի շահ Ընկերության օգտագործելու վերաբերյալ ապացույցներ, իսկ այդ գումարները դրամարկղ կամ հաշվեհամարին պատասխանողի կողմից չմուտքագրելու հետևանքով Ընկերությունն ի վիճակի չի եղել կատարել իր դրամական պարտավորությունները, 08.09.2016 թվականին ճանաչվել է սնանկ և այլևս իրեն պատկանող գույք ու դրամական միջոցներ չի ունեցել՝ Կոմիտեի՝ 2.737.375 դրամի չափով և «Հանրախանութ «Դիմաց» ՍՊԸ-ի՝ 7.235.400 դրամի չափով պահանջները գրանցվել են Ընկերության պարտատերերի ցուցակում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված դեպքում համապարտ պատասխանատվության պահանջը սնանկության գործի շրջանակներում կարող է ներկայացնել միայն սնանկության գործով կառավարիչը: Կանխամտածված սնանկության հատկանիշների բացահայտման պարտականությունը ՀՀ օրենսդրությամբ դրված է սնանկության գործով կառավարչի վրա՝ հաշվի առնելով պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծություն իրականացնելու օրենքով սահմանված պարտականությունը:

Տվյալ դեպքում անդրադառնալով վերաքննիչ դատարանի այն եզրահանգմանը, որ Կառավարիչը չի ներկայացրել ապացույցներ այն մասին, թե վաճառված գույքերի գումարներն ինչ հանգամանքներում են անհետացել, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կառավարիչն իրականացնելով Ընկերության միակ մասնակցի և տնօրենի կողմից ֆինանսական միջոցների տնօրինման ժամանակագրական վերլուծություն և պարզելով, որ Ընկերության տնօրենն ունենալով օրինական ուժի մեջ մտած վճռով Կոմիտեի և «Հանրախանութ «Դիմաց» ՍՊԸ-ի նկատմամբ պարտավորություններ, վաճառելով Ընկերության գույքերը, վաճառքից առաջացած գումարները չի մուտքագրել Ընկերության դրամարկղ կամ հաշվեհամարին, այդ գումարները չի ուղղել Ընկերության պարտավորությունների կատարմանը՝ դրանով իսկ կանխորոշել է Ընկերության սնանկ ճանաչվելը:

Նման պայմաններում հայցի մերժման հիմք չէր կարող հանդիսանալ սուկ այն փաստը, որ Կառավարիչը չի ներկայացրել սնանկ ճանաչված անձի ֆինանսական վերլուծության արդյունքները, քանի որ ներկայացված ապացույցներով հաստատված՝ Ընկերության ֆինանսական վիճակի փոփոխությունների համատեքստում պատասխանողի գործողությունների հաջորդականությունն ինքնին վկայում է դրանցով սնանկության հատկանիշներ ստեղծելու մասին: Թեև տվյալ դեպքում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը կարող էին հաստատվել նաև պատասխանողի ֆինանսական վերլուծության արդյունքներով, սակայն առկա չէ կոնկրետ իրավակարգավորում այն մասին, որ դրանք կարող էին հաստատվել միայն նման ապացույցով: Այլ խոսքով՝ գործում գտնվող մյուս ապացույցներն անթույլատրելի համարելու հիմքեր չկան, ուստի գործի վերոհիշյալ փաստերը կարող էին հաստատվել և տվյալ դեպքում հաստատվել են այլ գրավոր ապացույցներով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կառավարչի կողմից ներկայացված և գործում առկա ապացույցներով հստակ հիմնավորվել է ինչպես պարտապան Ընկերության սնանկ ճանաչվելու և դրանում Ընկերության միակ մասնակից և ղեկավար հանդիսացող պատասխանողի գործողությունների միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, այնպես էլ այդ գործողությունները «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված կանխամտածված սնանկության հատկանիշներ ստեղծելու դիտավորությամբ կատարված լինելը:

Այսպիսով, գործում առկա վերաբերելի, թույլատրելի և բավարար ապացույցներով հիմնավորվել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի կիրառման համար անհրաժեշտ բոլոր նախապայմանների միաժամանակյա առկայությունը, ինչը հիմք էր Կառավարչի հայցը բավարարելու համար, մինչդեռ ստորադաս դատարանները սխալ գնահատելով գործում գտնվող ապացույցները, եկել են հակառակ եզրահանգման:

Վերը նշված պատճառաբանություններով ամբողջությամբ հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է»:

Վճռաբեկ դատարանի դատավոր Գ. Հակոբյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերում Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից արտահայտված կարծիքի հետ, շարադրում են հատուկ կարծիքս դրա վերաբերյալ:

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքում պետք է նշվեն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքը և դրա հիմնավորումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ բողոքի քննության արդյունքներով կայացված Վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշվում է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ նույն օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից առնվազն մեկի առկայության հիմնավորումը:

Տվյալ դեպքում բողոք բերած անձը որպես **վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք և հիմնավորում** վճռաբեկ բողոքում նշել է հետևյալը.

«ա) Սույն գործով առերևույթ առկա է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով երաշխավորված մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ և 59-րդ հոդվածներով սահմանված դատավարական իրավունքի նորմերի այնպիսի այնպիսի խախտումներ, որը խաթարում են արդարադատության բուն էությունը: Դրանց մանրամասն հիմնավորումները շարադրված են սույն բողոքի հիմքերում:

բ) Սույն գործով Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 58-րդ հոդվածների միատեսակ կիրառության համար և բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր հետևյալ հարցադրումների կապակցությամբ.

-որոնք են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի կիրառման համար անհրաժեշտ նախապայմանները.

- արդյո՞ք «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի կիրառման համար անհրաժեշտ է պարտապան ընկերության սնանկ ճանաչվելու և դրանում ընկերության ղեկավարի գործողությունների միջև պատճառահետևանքային կապի առկայության, այդ գործողությունները կանխամտածված սնանկության հարկանիշներ ստեղծելու մեղավորությամբ կատարված լինելու վերաբերյալ փաստերը

- արդյո՞ք «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի կիրառման համար պարտապան ընկերության սնանկ ճանաչվելու և դրանում ընկերության ղեկավարի գործողությունների միջև պատճառահետևանքային կապի առկայության, այդ գործողությունները կանխամտածված սնանկության հարկանիշներ ստեղծելու դիտարկությամբ կատարված լինելու վերաբերյալ փաստերի հաստատմանն ուղղված թույլատրելի ապացույցը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածով սահմանված պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունն է»:

Հիմք ընդունելով այն, թե վճռաբեկ բողոք բերած անձը որպես **վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք և հիմնավորում** ինչ է նշել իր կողմից ներկայացված վճռաբեկ բողոքում՝ կարծում են, որ Վճռաբեկ դատարանը տվյալ դեպքում վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը կարող էր պայմանավորել՝

- կա՛մ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշման էական նշանակություն ունենալը պայմանավորելով Վերաքննիչ դատարանի կիրառած «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 58-րդ հոդվածների կապակցությամբ իրավունքի զարգացման խնդրի առկայությամբ,

- կա՛մ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով՝ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտման առերևույթ առկայությունը պայմանավորելով բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 59-րդ և 66-րդ հոդվածների այնպիսի խախտում թույ տալով, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, ինչպես արդեն իսկ նշվեց վերը, վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով վարույթ ընդունելը պայմանավորել է նաև **«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի** այնպիսի խախտում թույլ տալով, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, որպիսի՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք իմ կարծիքով վճռաբեկ բողոքում առկա չէ:

Դրանից ելնելով՝ նաև գտնում եմ, որ Վճռաբեկ դատարանը չէր կարող վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը դիտել բավարար՝ Վերաքննիչ դատարանի որոշումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի **2-րդ** մասի ուժով բեկանելու համար:

Միննույն ժամանակ ցանկանում եմ կարծիք հայտնել նաև հետևյալի մասին.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նույն հոդվածի իմաստով՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, եթե բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե առկա է նույն օրենսգրքի 364-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը չի կիրառել այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը պետք է կիրառեր, կիրառել է այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտման առերևույթ առկայության հիմքով վճռաբեկ բողոքն

ընդունվում է քննության, եթե բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը: Օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի և նույն օրենսգրքի 364-րդ հոդվածի իմաստով՝ նյութական իրավունքի նորմերի խախտման առումով այդպիսի խախտում, իսկ դրա արդյունքում՝ դատական ակտի բեկանման հիմք է համարում նյութական իրավունքի նորմերի այնպիսի խախտումը կամ դրանց սխալ կիրառումը, որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը, ինչպես արդեն իսկ նշվեց վերը, սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորել է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով՝ նաև նշելով, որ «*առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը*»:

Բողոքի քննության արդյունքում Վճռաբեկ դատարանը, բավարար համարելով վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը, Վերաքննիչ դատարանի 08.04.2022 թվականի որոշումը բեկանել է և փոփոխել՝ հայցը բավարարել է:

Դրանից ելնելով անհրաժեշտ են համարում անդրադառնալ բացառապես Վճռաբեկ դատարանի պատճառաբանություններին՝ պարզելու համար, թե արդյո՞ք դրանցում նշվածները կարող էին բավարար հիմք հանդիսանալ բողոքի քննության արդյունքներով նման եզրահանգման գալու համար:

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 5-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ բողոքի քննության արդյունքներով կայացված Վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշվում են դատական ակտը բեկանելիս այն շարժառիթները, որոնցով Վճռաբեկ դատարանը չի համաձայնվել այդ ակտը կայացրած դատարանի հետևությունների հետ:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը որպես այդպիսի շարժառիթ, ըստ էության, նշել է, որ՝

- «*Կառավարչի կողմից ներկայացված և գործում առկա ապացույցներով հստակ հիմնավորվել է ինչպես պարտապան Ընկերության սնանկ ճանաչվելու և դրանում Ընկերության միակ մասնակից և ղեկավար հանդիսացող պատասխանողի գործողությունների միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, այնպես էլ այդ գործողությունները «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված կանխամտածված սնանկության հատկանիշներ ստեղծելու դիտարկությամբ կատարված լինելը*»:

Արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ «*գործում առկա վերաբերելի, թույլատրելի և բավարար ապացույցներով հիմնավորվել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի կիրառման համար անհրաժեշտ բոլոր նախապայմանների միաժամանակյա առկայությունը, ինչը հիմք էր Կառավարչի հայցը բավարարելու համար, մինչդեռ ստորադաս դատարանները սխալ գնահատելով գործում գտնվող ապացույցները, եկել են հակառակ եզրահանգման*»:

Կարծում են, որ Վճռաբեկ դատարանը տվյալ դեպքում չէր կարող կատեգորիկ հետևություն անել այն մասին, որ «*գործում առկա վերաբերելի, թույլատրելի և բավարար ապացույցներով հիմնավորվել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի կիրառման համար անհրաժեշտ բոլոր նախապայմանների միաժամանակյա առկայությունը...*»՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցանք է համարվում նույն օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված, հանցագործության սուբյեկտի կողմից մեղավորությամբ կատարված արարքը:

Տվյալ դեպքում օրենսդիրը, կանխամտածված սնանկությունը՝ **որոշակի հանցակազմով պայմանավորված**, դիտելով որպես ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարք՝ հանցանք, նույն օրենսգրքի **288-րդ հոդվածի 1-ին մասում** ամրագրել է, որ ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ կամ նրա անունից հանդես գալու իրավունք ունեցող անձի, իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների), իրավաբանական անձի անունից օրենսդրությամբ սահմանված կարգով հանդես գալու կամ նրան պարտադիր կատարման ենթակա ցուցում տալու կամ որոշումը կանխորոշելու հնարավորություն ունեցող անձի կամ մարմնի կողմից սեփականությամբ տվյալ ֆիզիկական անձին, անհատ ձեռնարկատիրոջը կամ իրավաբանական անձին պատկանող գույքը ոչնչացնելու, ակնհայտ կեղծ կամ շինծու գործարքներ կնքելու կամ այլ եղանակով անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծումը կամ դրանց չափի ավելացումը սեփական կամ այլ անձի շահերից ելնելով, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին՝

պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով նախատեսված արարքը կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե ամբողջությամբ հատուցել է հանցագործությամբ պատճառված գույքային վնասը և հաշվարկված տույժերը:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ **կախված պատճառված վնասի չափից**՝ որոշակի դեպքերում օրենսդիրը կանխամտածված սնանկության համար նախատեսել է քրեական պատասխանատվություն, եթե դրա հետևանքով անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին՝ ՀՀ քրեական օրենսգրքի իմաստով, պատճառվել է **խոշոր չափերի գույքային վնաս**:

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝ (...) **պատճառած գույքային վնասի** (...) **չափերը**՝ նույն օրենսգրքում (...) պատճառված գույքային վնասի (...) մանր չափ է համարվում 500.000 Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը), **խոշոր չափ** է համարվում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարի մինչև 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը), բացառությամբ նույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերի:

Տվյալ դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով այլ բան նախատեսված չէ, որի պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 288-րդ հոդվածում «խոշոր չափ» եզրույթն օգտագործելիս օրենսդիրն ի նկատի է ունեցել 500.000 Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարի մինչև 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

Վերոգրյալից բխում է, որ բոլոր այն դեպքերում, երբ քաղաքացիական դատավարության կարգով ներկայացվում է ենթադրյալ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածից բխող պահանջ, նախ դատարանը պարտավոր է պարզել՝ արդյո՞ք այդ արարքն իր մեջ չի պարունակում ՀՀ քրեական օրենսգրքի 288-րդ հոդվածով նախատեսված հատկանիշներ, և բոլոր այն դեպքերում, երբ այն իր մեջ պարունակում է այդպիսիք, ապա գործը քննող

դատարանը պարտավոր է պահանջել նաև ներկայացնել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած համապատասխան դատական ակտ՝ հաշվի առնելով տվյալ անձի անմեղության կանխավարկածը, և միայն ՀՀ քրեական օրենսգրքի 288-րդ հոդվածով նախատեսված հատկանիշներ պարունակելու հանգամանքը բացառելուց հետո շարունակել գործի քննությունը քաղաքացիական օրենդրությամբ նախատեսված կարգով:

Ավելին՝

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելուց հետո՝ 35 օրվա ընթացքում, կառավարիչը դատարան է ներկայացնում պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունը: (...)

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «է» ենթակետի համաձայն՝ պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունն առնվազն պետք է պարունակի տեղեկություններ կեղծ կամ **կանխամտածված սնանկության** հատկանիշների առկայության (...)

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կեղծ կամ **կանխամտածված սնանկության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում կառավարիչը պարտավոր է անհապաղ հաղորդում ներկայացնել իրավասու մարմիններ:**

Նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը կառավարչի վրա պարտականություն է դրել կանխամտածված սնանկության հատկանիշները բացահայտելու պարտապանին սնանկ ճանաչելուց հետո՝ 35 օրվա ընթացքում՝ վերջինիս ֆինանսական վիճակի վերլուծությամբ՝ նաև այդ մասին տեղեկությունը ներառելով սնանկության դատարան ներկայացվող՝ պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծության մեջ:

Մինևույն ժամանակ օրենսդիրը կառավարչի վրա նաև պարտականություն է դրել կանխամտածված սնանկության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ հաղորդում ներկայացնելու իրավասու մարմիններ, որպիսի իրավակարգավորումները ևս վկայում են այն մասին, որ բոլոր այն դեպքերում, երբ սնանկության գործով կառավարիչը հայտնաբերում է հենց ՀՀ քրեական օրենսգրքի 288-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներ, ապա նման պայմաններում՝ մինչ ենթադրյալ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածից բխող հայցը դատարան ներկայացնելը պարտավոր է իր հերթին պարզել՝ արդյոք դրանում նշված արարքը պարունակում է հանցագործության հատկանիշներ, թե՛ ոչ:

Տվյալ դեպքում սույն գործի փաստերի համաձայն՝ ենթադրյալ կանխամտածված սնանկության վերաբերյալ հայցի հիմքում դրվել է պատասխանողի կողմից Ընկերությանը 10.472.775 ՀՀ դրամի չափով գույքային վնաս պատճառած լինելու հանգամանքը, որի պայմաններում, իմ կողմից հայտնված վերը նշված դիրքորոշումների համաձայն, հայցվորը պարտավոր էր դատարան ներկայացնել քրեական դատավարության կարգով քննված գործի շրջանակներում կայացված՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտ՝ պատասխանողին ՀՀ քրեական օրենսգրքի 288-րդ հոդվածով նախատեսված հանցանքը կատարելու մեջ մեղավոր ճանաչելու մասին, որը տվյալ դեպքում սույն գործով ինչպես բացակայում է, այնպես էլ նման փաստ որևէ մեկի կողմից չի վկայակոչվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հայտնում եմ իմ անհամաձայնությունը Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշման վերաբերյալ:

Դատավոր՝

Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ